Առ ի յիշատակ իւրում անդրանկի,
Յակոբոս անուն որդւոյն նազելի.
Որ ի մանկական ծաղկեալ հասակի
Վախճանեալ փոխի Հնդկաց աշխարհի՝
Թողեալ կաթոգին զիւրսն ըզկնի
Աշակերտութեամբ զբրոց սոփեստի։
Ի Վէնէտիկ 1788, ի թուին հայոց ՌՄԻԷ»։

Հայկական քարտեզագրական հրատարակություններին նվիրած իր գրքում Հ. Ստեփանյանը այս քարտեզի մասին գրում է, որ այն «փորագրել են աղա Շ. Շամիրյանցի որդիները»[10]։ Ինչպես երևում է վերը բերված հիշատակարանից, դա միանգամայն սխալ է, փորագրողների մասին ոչ մի խոսք չկա այնտեղ, իսկ Շ. Շահամիրյանի որդի՝ Հակոբի անունը հիշատակվում է այն կապակցությամբ միայն, որ «Աշխարհացույց Հայաստանեայց»-ը նվիրված է նրա հիշատակին (մահացել ու թաղվել է Հնդկաստանում 1774 թ.)։

Քարտեզի ձախ կողմում կողմնացույց է գծագրված, որ տրադիցիոն կերպով կազմված է քամիների հունարեն անվանումներով։

Չափազանց ուշագրավ է, որ «Աշխարհացույց Հայաստանեայց»-ում աշխարհագրական անունների մի մասը տրված է ռուսերեն թարգմանությամբ. օրինակ կարդում ենք՝ Մեծ Հայք—Великая Арменія, Փոքր Հայք—Малия Арменія, Գառնի—Карни, Կրճունիք—Карчуник, Ծով Միջերկրական—Средиземное море, Բուլղարք—Булгарія, Դրունք Էթիլ գետոյ—Устье Волги, Աշխարհ Մասքթաց—Земля Маскутская և այլն։ «Աշխարհացույց Հայաստանեայց»-ը թարգմանված է «План Арменскій», իսկ պատճենի վրա՝ «Карта Армянского владения»։ Այս թարգմանությունները, ինչպես կտեսնենք ստորև, ապագրության հետ ոչ մի առնչություն չունեն, և ավելացված են ձեռքով, հրատարակությունից 28 տարի հետո։

Աշխարհագրական մի շարք անուններ տրված են երկու ձևով, այսպես՝ «Կարին»-ի տակ դրված է նաև «Էրզրում», գրված է՝ «Ղարս, որ է Կարս», «Եգիպտոս, որ է Մըսրը», «Եկրատանք, որ է Համատան», «Մոլդավիա, որ է Փուղտան», «Պրոպոնտոս, որ է Մառմառցու ծով» և այլն։ Հայաստանի մի մասը և Վրաստանը, որի հետ նաև Կովկասյան լեռնաշղթայի և Հյուսիսային Կովկասի մի մասը, ամենայն հավանականությամբ պատվիրատուի պահանջով, վերցված են մի ընդհանուր սահմանի մեջ, ըստ երևույթին, դա մագրասցիների երազած հայ-վրացական միասնական պետության տերիտորիան է, որը նրանք կամենում էին ստեղծել Ռուսական Կայսրության հովանու ներքո։

Համեմատությունը ցույց տվեց, որ «Աշխարհացույց Հայաստանեայց»-ը կազմողները իրենց ձեռքի տակ ունեցել են նաև 1751 թ. Վենետիկում լույս տեսած Հայաստանի քարտեզը և մեծապես օգտվել նրանից. դա երևում է ոչ միայն ափերի գծագրության (հատկապես Գեղամա, Աղթամարա և Քապուտան ծովակների) ու բնակավայրերի տեղադրման ընդհանուր նմանությունից, այլև 1751 թ. քարտեզի սխալների մեխանիկական կրկնությունից (օրինակ՝ երկուսի վրա էլ Աղթամարա և Քապուտան լճերը չափազանց մոտեցված են միմյանց,

10 Հ. Ստեփանյան, Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695—1955), Համառոտ ակնարկ, Երևան, 1957, էջ 44։